<<01>> 03. 2023թ.Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ՝Վ.Պ.Գրիգորյանս քննելով <<14> 02. 2023թ. Թիվ 42 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ 14.02.2023թ.-ին 15:00-ի սահմաններում Կարեն Անդրանիկի Հակոբյանը /ծնվ.15.11.1998թ., բն է Արտաշատ, Բարձրաշեն, Հ.Թումանյան փ., տուն 7/ գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ օգտագործել է ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կարեն Անդրանիկի Հակոբյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝<< >>_____2023թ.

Պետ,
ոստիկանության գնդապետ Վ.Պ.Գրիգորյան